Co-financed by

ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն

Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

**Սույն փաստաթուղթը մշակվել է
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության
«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում»
ծրագրի շրջանակում**

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՐՏԱԴՊՐՈՖԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ-2023թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Նախաբան.....3

2. Ընդհանուր դրույթներ.....4

3. Արտադպրոցական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունը.....6

4. Արտադպրոցական կրթության ծառայության իրավակիրառական պրակտիկան.....6

5. Արտադպրոցական կրթության կազմակերպման լիազորության ապակենտրոնացման նախապատմությունը և գործընթացը.....6

6. Արտադպրոցական կրթության կազմակերպման լիազորության ֆինանսավորման առկա գործիքակազմերը.....6

7. Առաջարկություններ.....6

1. ՆԱԽԱԲԱՆ

Սույն գնահատման նախագծի նպատակն է ուսումնասիրել, վերլուծել և ներկայացնել համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող՝ արտադպրոցական դաստիարակության և արտադպրոցական կրթության ոլորտը կարգավորող ՀՀ ներպետական օրենսդրական կարգավորումները:

Որպես ինստիտուցիոնալ բնույթի գնահատում, սույն փաստաթղթով փորձ է արվում ներկայացնելու առաջին հերթին կրթության, մասնավորապես՝ արտադպրոցական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի կարգավորումները, վերլուծելով և ներկայացնելով արտադպրոցական դաստիարակության և կրթության կազմակերպումը, արտադպրոցական հաստատությունների ենթակայությունը, արտադպրոցակական դաստիարակության և կրթության ապահովման մասով՝ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

Հաջորդիվ ուսումնասիրման և գնահատման առարկա են հանդիսացել տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող այն օրենսդրական ակտերը, որոնցով սահմանված են իրավակարգավորումներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, արտադպրոցական կրթության կազմակերպման իրավահարաբերությունների մասով:

Գնահատման նախագծի շրջանակում, առավելապես շեշտը դրվել է ՀՀ ներպետական օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների վերլուծության վրա, մասնավորապես՝ արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման մասով:

Սույն փաստաթղթի շրջանակում, փորձ է արվել, օրենսդրական համալիր ուսումնասիրությունների համատեքստում իրականացնել նաև իրավահամեմատական վերլուծություններ, մասնավորապես՝ կրթության, մասնավորապես՝ արտադպրոցական կրթության և տեղական ինքնակառավարման ոլորտները կարգավորող օրենսդրական ակտերի մակարդակում, նպատակ ունենալով վեր հանել երկու ոլորտները կարգավորող օրենքներում առկա օրենսդրական բացերն ու հակասությունները, փաստաթղթի վերջնարդյունքում ներկայացնելով եզրահանգումներ և համապատասխան լուծումներ ենթադրող առաջարկություններ:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Անհրաժեշտ է արձանագրել, որ արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների ցանցը Հայաստանի Հանրապետություն ձևավորվել է դեռևս խորհրդային իշխանության տարիներին: Ըստ վիճակագրության 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի և մանկապատանեկան ստեղծագործական 240 դպրոց և կենտրոն, որոնցից 50-ը Երևանում, իսկ մնացած 190-ը՝ ՀՀ մարզերում (համայնքներում)[1]:

2021/2022 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում սովորել է 48 823 աշակերտ: Ըստ վիճակագրության 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել է 174 սպորտային կազմակերպություն: Երևանում գործող սպորտային կազմակերպություններից 12-ը գտնվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, 39-ը՝ Երևանի քաղաքապետարանի, 3-ը գտնվել են վարչական շրջանների, 6-ը՝ «Հայաստան» մարզական միության, և 2-ը՝ «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության ենթակայությամբ: Ստացվում է այնպես, որ Երևան համայնքից դուրս, հանրապետության մնացած 70 համայնքները միասին վերցրած, գործում են թվով 111 սպորտային կազմակերպություններ:

1996 թվականին Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց վարչատարածքային կառավարման նոր համակարգ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների մոտ 80%-ը հանձնվեցին համայքներին: Ըստ էության, տեղի ունեցավ արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման լիազորության ապակենտրոնացում, որն իրականացվեց համայնքի ղեկավարին, որպես սեփական լիազորություն վերապահելու միջոցով:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային (ըստ ենթակայության) բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ լրացուցիչ աղբյուրներից:

---

[1] Տե՛ս «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում: https://www.e-draft.am/projects/5082/about

3. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման հետ կապված հիմնական իրավահարաբերությունները կարգավորվում են «Կրթության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի հասկացությունները սահմանող 3-րդ հոդվածում տրված է արտադպրոցական ծրագրի հասկացությունը, համաձայն որի, արտադպրոցական ծրագիրը՝ երեխաների հետաքրքրությունները, նախասիրությունները, կարողունակությունները, ինտելեկտուալ զարգացման մակարդակը, ստեղծարար հմտությունները, ֆիզիկական ունակությունները, մարդկային կապիտալը զարգացնող ու կատարելագործող, ֆորմալ (հիմնական) կրթական ծրագիրը լրացնող ուսուցման ծրագիր է:

Միաժամանակ, օրենքի նույն հոդվածով սահմանվում է, որ արտադպրոցական կազմակերպությունը կամ կենտրոնը՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում է, որն իրականացնում է արտադպրոցական ծրագիր[2]:

Ըստ էության, արտադպրոցական կրթությունը համարվում է լրացուցիչ կրթություն, որի մասին են վկայում ուսումնական հաստատությունների տիպերը նկարագրող՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի կարգավորումները:

Արտադպրոցական կրթության նպատակն է զարգացնել երեխաների սոցիալական, ինքնասպասարկման և ինտելեկտուալ հմտությունները, ձևավորել ու զարգացնել անձի՝ որպես քաղաքացու արժեհամակարգը, բազմաֆունկցիոնալ կարողություններն ու փափուկ հմտությունները, նպաստել հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ռազմահայրենասիրական, տեխնիկական, բնապահպանական գիտելիքների ձեռքբերմանը և նախամասնագիտական կողմնորոշմանը՝ խթանելով մարդկային կապիտալի զարգացումը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում, պետությունը երաշխավորում է արտադպրոցական կրթության ու դաստիարակության համակարգի ստեղծումը և գործունեությունը, ապահովում առանձին ուղղություններով արտադպրոցական ծրագրերի իրականացման ու ծառայությունների տրամադրման հավասար հնարավորությունը՝ ի նպաստ երեխայի լավագույն շահի:

[2] Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15.1-ին կետ:

Հարկ է նկատել, որ մինչև 2023 թվականը, արտադպրոցական կրթության մասով, «Կրթության մասին» ՀՀ օրենքում որևէ կարգավորում ամրագրված չէր: Այդ օրենքում, արտադպրոցական կրթության փոխարեն սահմանված էր արտադպրոցական դաստիարակությունը, այն էլ միայն դրա նպատակի սահմանման և իրագործման համատեքստում:

10.02.2023թ. ընդունված ՀՕ-26-Ն օրենքով, «Կրթության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին լրացումներ և փոփոխությունների, որի շրջանակներում, օրենքում սահմանվեցին արտադպրոցական ծրագրի հասկացությունը, արտադպրոցական կազմակերպության կամ կենտրոնի հասկացությունը, արտադպրոցական կրթության նպատակը և հասկացությունը, պետության կողմից՝ արտադպրոցական կրթության երաշխավորումը և այլն:

Արժանահավատ է դիտարկել այն հանգամանքը, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում 10.02.2023թ. ընդունված ՀՕ-26-Ն օրենքով կատարված փոփոխություններն ու լրացումները էականորեն բարելավվել են արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման հետ կապված իրավահարաբերությունները, քանի որ, մինչ այդ առկա օրենսդրական կարգավորումները, այն որակում էին բացառապես լրացուցիչ կրթության մի բաղադրիչ, այն էլ արտադպրոցական դաստիարակության ձևակերպմամբ:

Բացի այդ, սահմանված չէին, արտադպրոցական դաստիարակության կամ կրթության հասկացությունները, դրա կազմակերպման, իրականացման, ֆինանսավորման հետ կապված օրենսդրական գործիքակազմերը, ինչը դժվարացնում էր առնվազն համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքը, հիմքեր ստեղծելով վերջիններիս համար, երբեմն իրավակիրառական պրակտիկայում իրականացնել այնպիսի գործողություններ, որոնց վերաբերյալ օրենքը՝ օրենսդրական բացերի իմաստով, կարգավորումներ չէր նախատեսել:

Արտադպրոցական ծրագրերը սահմանվում են որոշակի ուղղություններով, մասնավորապես.

1. մշակույթի և արվեստի.
2. տեխնիկական.
3. հումանիտար.
4. հասարակագիտական.
5. բնագիտական.
6. սպորտային և մարզական.
7. ճանաչողական և բնապահպանական.

8. ոլորտային հետազոտական.
9. արշավային.
10. զբոսաշրջային:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում, օրենսդիրը, բավականին մեծացրել է արտադպրոցական կրթության կազմակերպման, մասնավորապես՝ այս կրթությունը կազմակերպող և տրամադրող սուբյեկտների շրջանակը: Այդ մասին է վկայում, օրենքով արտադպրոցական ծրագրի սահմանումը, որը որպես կրթության ծրագրի տեսակ, կարող է իրականացվել տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող իրավաբանական անձանց կողմից:

Այսպես, արտադպրոցական ծրագրերը կարող են իրականացվել.

1) արտադպրոցական կազմակերպություններում,
2) մշակութային կազմակերպություններում,
3) կենտրոններում,
4) ակումբներում,
5) ճամբարներում,
6) ինչպես նաև արշավներ, զբոսաշրջություն կազմակերպող, բնապահպանական արտադպրոցական ծրագիր իրականացնող կազմակերպություններում[3]:

Մինչև 2023 թվականի փետրվար ամիսը գործող «Կրթության մասին» ՀՀ օրենքով, սահմանվում էր, որ արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

Ստացվում է այնպես, որ գործող օրենքը, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնները, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցները դիտարկում է որպես արտադպրոցական կազմակերպություններ, իսկ մնացածի մասով տվել է առանձին կարգորոշումներ:

Եզրահանգումն այն է, որ արտադպրոցական կազմակերպություններ են համարվում մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնները, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցները:

[3] Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մաս:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված են լիազորություններ, որոնք վերաբերելի են նաև արտադպրոցական կրթության բնագավառի քաղաքականության, սակայն, որևէ լիազորություն համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների համար, այս օրենքով սահմանված չէ: Արտադպրոցական կրթության բնագավառում Կառավարությունը իրականացնում է հետևյալ լիազորությունները.

- հաստատում է պետական արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների օրինակելի կանոնադրությունները.
- սահմանում է պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը.
- սահմանում է արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագրերը.
- սահմանում է պետական և համայնքային արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը:

Միաժամանակ, արտադպրոցական կրթության բնագավառի քաղաքականության մշակման և վարման շրջանակում, լիազորություններ ունի կրթության պետական կառավարման լիազոր մարմինը, որն.

- մշակում և հաստատում է արտադպրոցական ծրագրի ձևաչափը և վերջնարդյունքները՝ ըստ սահմանված ուղղությունների.
- հաստատում է արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ներկայացրած արտադպրոցական ծրագրերի երաշխավորման կարգը.
- հաստատում է արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը:

Երկու մարմիններին, այս բնագավառում վերապահված լիազորությունների ուսումնասիրությունն ու վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են որոշակի իրարամերժ կամ միգուցե, ոչ այնքան տրամաբանական կարգավորումներ, գրեթե համասեռ իրավահարաբերությունների մասով: Այսպես, Կառավարությանը

վերապահված է լիազորություն, որով վերջինս սահմանում է պետական և համայնքային արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը, միաժամանակ, լիազոր մարմնին՝ կրթության բնագավառի նախարարությանը վերապահված է համասեռ իրավահարաբերության մասով հետևյալ լիազորությունը. հաստատում է արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը:

Հարց է առաջանում, եթե արտադպրոցական հաստատություններին՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքներն ու մեթոդաբանությունը պետք է հաստատի Կառավարությունը, ապա ՀՀ պետական բյուջեն տնօրինող Կառավարության փոխարեն, ինչու պետք է նախարարությունը հաստատի արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը:

Ըստ էության ֆինանսավորման կարգը միտված է պետական բյուջեից հատկացումների տրամադրման ընթացակարգերի սահմանմանը, որն վերջին հաշվով գտնվում է գործադիր իշխանության կողմից վարվող քաղաքականության և իրավասությունների տիրույթում:

Ակնհայտ է, որ արտադպրոցական կազմակերպությունները, մասնավորապես՝ համայնքներում գործող հասատությունները, գերակշիռ մասի իմաստով, համարվում են համայնքային ենթակայության, հետևաբար, օրենքում, համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, առնվազն համայնքի ղեկավարի համար պետք է սահմանված լինեին համապատասխան լիազորություններ:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից, ստեղծվում է տպավորություն, որ առհասարակ, հանրապետությունում արտադպրոցական կազմակերպությունները կամ ամբողջությամբ մասնավոր տիրույթում են գործում, կամ ամբողջությամբ պետական ենթակայության են:

Սակայն, իրավակիրառական պրակտիկայից ելնելով, պետք է արձանագրել, որ այդ կազմակերպությունների մեծ մասը համարվում է համայնքային: Ինչը իրավացիորեն հանգեցնում է այն եզրահանգմանը, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքը առնվազն արտադպրոցական կրթության կազմակերպման իմաստով, պետք է սահմաներ համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ, որով պարզ կդառնար, արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման իրական դերակատարի ինչպես կարգավիճակը, այնպես էլ լիազորությունների շրջանակը:

Վերը մեջբերվածի համատեքստում, առավել քան նպատակահարմար է անդրադառնալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումներին: Առաջին հերթին, անհրաժեշտ է արձանագրել, որ արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը, համարվում է համայնքի պարտադիր խնդիր[4]:

Նշված պարտադիր խնդրի լուծմանն հասնելու նպատակով, օրենսդիրը, համայնքի ղեկավարին վերապահել է սեփական լիազորություն, որով համայնքի ղեկավարը կազմակերպում է արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում[5]:

Մի կողմից, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ արտադպրոցական կրթության իրականացումը, դիտարկում է որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն, ինչն ենթադրում է, որ այդ կրթության իրականացման հետ կապված ծախսերը իրականացվում են համայնքի բյուջեի սեփական միջոցների հաշվին, մյուս կողմից՝ իրավակիրառական պրակտիկան «գալիս է» փաստելու, որ արտադպրոցական հաստատությունների զգալի մասը համարվում է համայնքային ենթակայության:

Բացի այդ, ուշադրության է արժանի «Կրթության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ կրթության բնագավառում օրենսդրության խնդիրները, մասնավորապես հետևյալը. իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

Սակայն, այս խնդրի լուծմանը հասնելու իմաստով, նույն օրենքը օրենսդրական նախադրյալներ չի ստեղծել, առավելապես, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կամ որ նույնն է, իրավասությունների սահմանման բացակայությամբ պայմանավորված:

Վերը նկարագրվածի համատեքստում, անհասկանալի է դառնում «Կրթության մասին» ՀՀ օրենքով, համայնքային ենթակայության արտադպրոցական կազմակերպությունների մասով, ինչպես նաև արտադպրոցական կրթության բնագավառում համայնքի ղեկավարին վերապահվելիք լիազորությունների բացակայությունը:

---

[4] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:

[5] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

Նշվածը հաշվի առնելով, առաջարկվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքում սահմանել կարգավորումներ համայնքային ենթակայության արտադպրոցական կազմակերպությունների առանձնահատկությունների վերաբերյալ, մասնավորապես՝ դրանց կառավարման և գործունեության ֆինանսավորման սկզբունքների մասով:

Միաժամանակ, առաջարկվում է նույն օրենքով, սահմանել արտադպրոցական կրթության բնագավառում համայնքի ղեկավարի համար լիազորություններ, որոնք համահունչ կլինեն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգավորումների հետ, միաժամանակ, կստեղծեն բավարար պայմաններ՝ օրենսդրական գործիքակազմեր, այդ լիազորությունը պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

Բացի այդ, հարկ է նկատել, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում 10.02.2023թ. ընդունված ՀՕ-26-Ն օրենքով կատարված փոփոխություններն ու լրացումները չեն ուղեկցվել ամբողջական հարակից օրենքներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու հաշվի առնմամբ, ինչի մասին է վկայում այն փաստը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում դեռևս կիրառվում է «արտադպրոցական դաստիարակություն» եզրույթները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում 10.02.2023թ. ընդունված ՀՕ-26-Ն օրենքով «արտադպրոցական դաստիարակությունը» վերաձևակերպվել է որպես «արտադպրոցական կրթություն», առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանեցնել «Կրթության մասին» ՀՀ օրենքում կիրառվող եզրույթների և հասկացությունների հետ:

4. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Հայաստանում արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների ցանցը ձևավորվել է դեռևս խորհրդային իշխանության տարիներին: Ըստ վիճակագրության 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի և մանկապատանեկան ստեղծագործական 240 դպրոց և կենտրոն, որոնցից 50-ը Երևանում, իսկ մնացած 190-ը՝ ՀՀ մարզերում (համայնքներում)[6]:

2021/2022 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում սովորել է 48 823 աշակերտ: Ըստ վիճակագրության 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել է 175 սպորտային կազմակերպություն: Երևանում գործող սպորտային կազմակերպություններից 12-ը գտնվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, 39-ը՝ Երևանի քաղաքապետարանի, 3-ը գտնվել են վարչական շրջանների, 6-ը՝ «Հայաստան» մարզական միության, և 2-ը՝ «Աշխատանքային ռեզերվներ» մարզական հասարակական կազմակերպության ենթակայությամբ: Ստացվում է այնպես, որ Երևան համայնքից դուրս, հանրապետության մնացած 70 համայնքները միասին վերցրած, գործում են թվով 112 սպորտային կազմակերպություններ:

1996 թվականին Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց վարչատարածքային կառավարման նոր համակարգ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արտադպրոցական ուսումնական հաստատությունների մոտ 80%-ը հանձնվեցին համայնքներին: Ըստ էության, տեղի ունեցավ արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման լիազորության ապակենտրոնացում, որն իրականացվեց համայնքի ղեկավարին, որպես սեփական լիազորություն վերապահելու միջոցով:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային (ըստ ենթակայության) բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ լրացուցիչ աղբյուրներից:

---

[6] Տե՛ս «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում: https://www.e-draft.am/projects/5082/about

ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի N 2145-Ն որոշմամբ սահմանվել են պետական արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատությունների ցանկը, որով թվով 11 հաստատություններ համարվում են պետական, որոնցից 10-ը համարվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության, իսկ 1-ը պատվիրակված լիազորության հիմքով՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության: Ստորև ներկայացվում է պետական արտադպրոցական կրթադաստիարակչական հաստատությունների ցանկը սահմանող աղյուսակ 1-ում[7].

NN ը/կ	**Հաստատության անվանումը**	**Ենթակայությունը**
1.	Գեղագիտական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
2.	Մանկապատանեկան հանրապետական կենտրոն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
3.	Տավուշի մարզի Դիլիջանի երաժշտական դպրոց	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4.	Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
5.	Տեխնիկական ստեղծագործության հանրապետական կենտրոն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
6.	Հրաձգության հանրապետական մարզադպրոց	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
7.	Երևանի հանրապետական հոգեբանական կենտրոն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
8.	Լոռու մարզի տարածքային հոգեբանական կենտրոն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
9.	Շիրակի մարզի Գյումրու «Նարեկ» հոգեբանական ծառայության կենտրոն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
10.	Շիրակի մարզի Գյումրու «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
11.	Երևանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն	Երևանի քաղաքապետարան

Հարկ է արձանագրել, որ կրթության բնագավառի նախարարության համակարգում գործող արտադպրոցական կազմակերպությունների գործունեությունը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ այդ

[7] Տե՛ս ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի N 2145-Ն որոշման N1 հավելված:

կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումները ֆինանսավորվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 12.03.2021թ. N360 հրամանով սահմանված կարգով:

Հանրապետությունում գործող պետական և համայնքային ենթակայության արտադպրոցական ուսումնական հաստատությունների թվի և դրանցում արտադպրոցական կրթություն ստացող երեխաների թվաքանակի վիճակագրությունը վարում է ՀՀ վիճակագրական կոմիտեն: 2017-2022թթ. արտադպրոցական ուսումնական հաստատությունների քանակի և դրանցում ընգրկված երեխաների թվի դինամիկան տրված է աղյուսակ 1-ում և աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Արտադպրոցական ուսումնական հաստատությունների քանակի և դրանցում հաճախող երեխաների թիվը[8]:

Տարեթիվը	Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների թիվը	Հաճախող երեխաների թիվը
2017	224	49309
2018	225	48429
2019	245	53063
2020	246	54599
2021	243	48062
2022	240	48823

[8] Աղբյուրը ՀՀ Վիճակագրական կոմիտե: Տե՛ս «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում: https://www.e-draft.am/projects/5082/about

Աղյուսակ 3. Սպորտային կազմակերպությունների քանակի և դրանցում մարզիկների թվաքանակը:

Տարեթիվը	Սպորտային կազմակերպությունների թիվը	Մարզիկների թիվը
2017	174	42761
2018	175	42529
2019	175	42136
2020	175	40934
2021	174	42980

Հարկ է արձանագրել, որ համայնքային ենթակայությամբ գործող արտադպրոցական ուսումնական հաստատություններում՝ ուսուցումը իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված համապատասխան ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններով, որոնք իրենց մեջ ներառում են ուսուցանվելիք առարկաների ցանկը, դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված դասաժամերի նվազագույն քանակը, որը պարտադիր է տվյալ տարվա ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար:

Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ արտադպրոցական կրթության կազմակերպումը համարվում է համայնքի պարտադիր խնդիր, ինչն իրենից ենթադրում է այդ ծառայության գծով համայնքի ղեկավարին վերապահված սեփական լիազորություն, այնուհանդերձ կրթական բաղադրիչի քաղաքականությունը, մասնավորապես՝ նորմատիվները սահմանվում են կրթության բնագավառի լիազոր մարմնի կողմից, ինչն միանգամայնք տրամաբանական է և ընդունելի:

2021/2022 ուսումնական տարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում դասավանդել են 5099 ուսուցիչներ (76.8%-ը՝ կանայք), որոնց 42.6%-ն ունեցել է միջին մասնագիտական կրթություն:

Սպորտային կազմակերպություններում մարզումներն իրականացրել են 2104 մարզիչ-մանկավարժներ, նրանցից 324-ը կանայք (15.4%)[9]:

Համայնքային մակարդակում արտադպրոցական կրթության ծառայությունները մատուցվում են համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Անհրաժեշտ է արձանագրել, որ համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական, սպորտի և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար, համայնքի ավագանին սահմանում է տեղական վճար և այդ տեղական վճարի դրույքաչափ[10], որը ուղղվում է համայնքի բյուջե, որպես սեփական եկամուտ:

Ըստ էության, արտադպրոցական կրթական ծառայությունները կարելի է որակել որպես համայնքային ծառայություն, քանի որ, ինչպես արտադպրոցական կրթական հաստատություններն են գրեթե ամբողջությամբ համարվում համայնքային ենթակայության, այնպես էլ այդ ծառայությունները մատուցվում են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Արժանահավատ է դիտարկել նաև այն հանգամանքը, որ պետությունը, բացի արտադպրոցական կրթության բնագավառի քաղաքականության մշակումից, իրավակիրառական պրակտիկայում մասնակցում կամ աջակցում է այդ ծառայությունների բարելավվմանը, օրինակ՝ արտադպրոցական հաստատությունների շենքային պայմանների կամ տեխնիկական հագեցվածության ապահովման մասով պետության որոշակի աջակցությունը:

Այս իմաստով, հատկանշական կլիներ, եթե նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակով, ՀՀ կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգում[11] ավելացներ նաև արտադպրոցական կրթության հաստատությունների կառուցումը, վերակառուցումը և նորոգումը, որպես ծրագրային ոլորտ:

Վերոգրյալը հաշվի առնելով, առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, նախաձեռնել ՀՀ կառավարության 2006

---

[9] Տե՛ս «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում: https://www.e-draft.am/projects/5082/about

[10] Տե՛ս «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ:

[11] Տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշում:

թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու գործընթաց, որով արտադպրոցական կրթության հաստատությունների կառուցումը, վերակառուցումը և նորոգումը կհամարվի որպես ծրագրային ոլորտ, ինչի համատեքստում, կձևավորվի համայնք-պետություն համագործակցություն ի շահ արտադպրոցական կրթության և դրանից բխող ծառայությունների բարելավմանը:

Մարզադպրոցների կամ սպորտ դպրոցների թվաքանակի և ենթակայության վիճակագրությունը ներկայացվում է ստորև բերված աղյուսակ 4-ում[12]:

NN	ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ
1.	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	26
2.	Երևանի քաղաքապետարան	40
3.	ՀՀ համայնքներ	76
4.	ՀՀ մարզպետարաններ	7
5.	«Հայաստան» ՄՀԿ	10
6.	«Սևան» ՄՀԿ	12
7.	«Աշխատանքային Ռեզերվներ» ՄՀԿ	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ		**175**

Հարկ է նկատել, որ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայք էջի վիճակագրություն բաժնում, արտադպրոցական հաստատությունների վիճակագրությունը զետեղված չէ, ի տարբերություն նախադպրոցական, հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների[13]:

Արտադպրոցական մնացած հաստատությունների, այն է՝ երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների, ինչպես նաև մանկապատանեկական

[12] Աղյուսակի կազմման աղբյուր է հանդիսացել ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությունը, https://escs.am/am/static/sport-schools?s=sport

[13] Տ՛ես https://reports.emis.am/#/

ստեղծագործական կենտրոնների թվաքանակի և ըստ Երևան քաղաքի ու մարզերի վիճակագրությունը ներկայացվում է ստորև բերված աղյուսակ 5-ում[14]:

NN	Գտնվելու վայրը	Դպրոցների և կենտրոնների քանակը	Որից՝ երաժշտական դպրոցների քանակը	Որից՝ արվեստի դպրոցների քանակը	Որից՝ գեղարվեստի դպրոցների քանակը	Որից՝ մանկապատ. ստեղծագործ. կենտրոնների քանակը
1.	ԵՐԵՎԱՆ	50	16	9	1	24
2.	ԱՐԱԳԱԾՈՏՆ	12	5	4	2	1
3.	ԱՐԱՐԱՏ	23	10	7	3	3
4.	ԱՐՄԱՎԻՐ	20	12	7	1	-
5.	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	18	9	6	2	1
6.	ԼՈՌԻ	25	8	12	3	2
7.	ԿՈՏԱՅՔ	25	9	12	2	2
8.	ՇԻՐԱԿ	29	11	15	2	1
9.	ՍՅՈՒՆԻՔ	15	8	3	2	2
10.	ՎԱՅՈՑ ՁՈՐ	8	1	4	1	2
11.	ՏԱՎՈՒՇ	15	10	4	1	-
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		**240**	**99**	**83**	**20**	**38**

[14] Աղյուսակի կազմման աղբյուր է հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությունը, https://escs.am/am/static/sport-schools?s=sport

5. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան սահմանում է ապակենտրոնացման հիմնարար սկզբունքները: Այնուամենայնիվ, Խարտիան չպետք է դիտարկել բացառապես որպես փաստաթուղթ, որը ներկայացնում է ապակենտրոնացման նպատակները: Այն հարկ է նաև դիտարկել որպես մի փաստաթուղթ, որը նկարագրում է ապակենտրոնացման գործողության իրականացման անցումային ուղին: Հայաստանում ապակենտրոնացման ներկա վիճակի առնչությամբ Խարտիայի դրույթներն առաջ են քաշում հուշումներ առ այն, թե ինչ է անհրաժեշտ անել և որ էլ ավելի կարևոր է, ինչպես պետք է դա անել՝ սահմանելով ապակենտրոնացման համար պաշտպանիչ ուղեկալները: Այս ուղեկալները սահմանվում են ոչ թե դրույթներով, այլև այդ դրույթներում ներառված «հիմնաբառերի/բանալի բառերի» ձևակերպումներով[15]:

Լիազորությունների ապակենտրոնացման նպատակները տարբեր են, սակայն այդ նպատակների շարքում գերակա է հանրային ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը, ինչը տեղական ինքնակառավարման իրավունքի իրացման տեսանկյունից խիստ կարևոր է և հատկանշական: Իր բոլոր բնութագրիչներով հանդերձ, ապակենտրոնացման քաղաքականության վերջնարդյունքում՝ համայնքային իշխանությունները՝ տեղական ինքնակառավարման մարմինները, ստանձնում են լուրջ գործիքակազմեր ենթադրող լիազորություններ, որոնց իրականացմամբ պայմանավորված, համայնքների բնակիչները հնարավորություն են ստանում իրենց առավել «մոտ կանգնած» իշխանություններից ստանալ ծառայությունները:

Ապակենտրոնացումը ներդնելու մոտեցումը և դեպի ապակենտրոնացման համակարգ տանող քայլերը միջազգային իրավակիրառական պրակտիկայում տարբեր են: Սովորաբար ապակենտրոնացման բնույթը և ծավալը, բարեփոխումների գործընթացի և առանձին քայլերի սահմանումը, բարեփոխման ժամանակացույցը և այլն սահմանվում են Կառավարության կողմից: Մասնավորապես ՏԻՄ-երի ներառման և տեղական շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության մասին որոշումները կայացնում է կենտրոնական կառավարությունը: Այնուամենայնիվ, հարկ է, որ

[15] Տե՛ս Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում մշակված Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգային փաստաթղթի նախագիծ-Նկատառումներ և մեթոդաբանություն: Հեղինակ՝ Շտեֆան Դրագեր, 2019թ.:

Կառավարությունը, ինչպես նաև ՏԻՄ-երն, ակտիվորեն խաղան իրենց դերը՝ ապահովելու արդյունավետ ապակենտրոնացում:

Այստեղ խոսքը գնում է ինչպես ՏԻՄ-երի զորեղացման, այնպես և ապակենտրոնացումից ստացվող օգուտների մասին իրազեկության և գործընթացի նկատմամբ հետաքրքրության մակարդակի բարձրացման նպատակով տեղեկատվության տարածման և քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցության մասին: Երկու դերերը փոխկապակցված են և նույն գործընթացի մասն են կազմում: Այդ իսկ պատճառով ապակենտրոնացման համար պահանջվող քայլերը և մեխանիզմները պետք է սահմանվեն և մշակվեն կենտրոնական կառավարության, համապատասխան պետական մարմինների և ՏԻՄ-երի հետ համատեղ:

1996 թվականին Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց վարչատարածքային կառավարման նոր համակարգ, որի համատեքստում, Հայաստանը բաժանվեց թվով 10 մարզերի և թվով 931 համայնքների: Մայրաքաղաք Երեւանին տրվեց մարզի կարգավիճակ: Մարզերը բաժանվեցին քաղաքային եւ գյուղական համայնքների, իսկ Երեւանը՝ թաղային համայնքների: Այնուհետև, 2005թ. նոյեմբերի 27-ի խմբագրությամբ Սահմանադրությամբ սահմանվեց, որ Երևանը համայնք է, որի տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Դրան հետևեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումը (26.12.2008թ.)[16]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս 2002 թվականի մայիսի 7-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, արտադպրոցական կրթության կազմակերպման լիազորության մասով առանձին կարգավորում նախատեսված չի եղել, դրա փոխարեն, այդ օրենքի 41-րդ հոդվածով՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում էր հետևյալ պարտադիր լիազորությունը.

- կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, գրադարանների, *<u>կրթական և մշակութային այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները</u>*:

[16] Տե՛ս ՀՀ ՏԿԵՆ պաշտոնական կայք, տեղական ինքնակառավարման համակարգի նկարագիրը բաժին, https://www.mtad.am/pages/local-self-government-system

Ըստ էության, 1996 թվականից, իրավակիրառական պրակտիկայում, արտադպրոցական ուսումնական հաստատությունների մոտ 80%-ը հանձնվեցին համայնքներին, ինչը ցույց է տալիս, որ դեռևս այդ ժամանակ տեղի ունեցավ արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման լիազորության ապակենտրոնացում, որն իրականացվեց համայնքի ղեկավարին, որպես սեփական լիազորություն վերապահելու միջոցով:

Այսինքն, արտադպրոցական կրթության կազմակերպման լիազորության ապակենտրոնացումը եղել է լիազորության փոխանցման եղանակով կամ մեթոդով, որի համար սակայն, առանձնահատուկ ֆինանսավորման գործիքակազմեր չսահմանվեցին, այդ լիազորությունը փոխանցվեց տեղական ինքնակառավարման մարմիններին, համայնքի սեփական բյուջետային միջոցների հաշվին ֆինանսավորվելու նպատակով:

Արտադպրոցական կրթության կազմակերպման լիազորության ապակենտրոնացումը ըստ էության տեղի է ունեցել սկզբնական շրջանում այդ հաստատությունները համայնքային ենթակայության փոխանցելու միջոցով: Կրթության ոլորտի օրենսդրական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչ այժմ հստակեցված չէ արտադպրոցական կրթության կազմակերպման լիազորության իրականացումը, մասնավորապես՝ իրականացնողի տեսանկյունից:

Ինչպես և 1999 թվականին, այնպես էլ այս պահին գործող «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված չէ արտադպրոցական կրթության կազմակերպման կոնկրետ սուբյեկտների շրջանակը, մասնավորապես՝ մատնանշված չեն տեղական ինքնակառավարման մարմինները, հետևաբար և բացակայում են այդ օրենքում համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները արտադպրոցական կրթության կազմակերպման բնագավառում:

Եթե չլիներ գործող «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա համապատասխան կարգավորումները, առնվազն տպավորություն կձևավորվեր, որ արտադպրոցական կրթության կազմակերպման լիազորությունը՝ իրականացնողի տեսանկյունից չունի «հասցեատեր»:

Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը և իրականացումը համայնքի տարածքում համարվում է համայնքի պարտադիր խնդիր:

Վերը մեջբերված համայնքի պարտադիր խնդրի լուծման նպատակով, օրենսդիրը, նույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն, համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում: Այս օրենսդրական կարգավորումից հետևում է, որ արտադպրոցական կրթության կազմակերպումը համայնքի տարածքում համայնքի ղեկավարին վերապահված լիազորություն է, ինչից ենթադրվում է, որ ամբողջ հանրապետությունում այդ լիազորությունը իրականացվում է համայնքների ղեկավարների կողմից:

Հարկ է նկատել, որ առկա են օրենսդրական հակասություններ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի երկու իրավանորմերի, ինչպես նաև «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորումների միջև: Մի դեպքում, որպես պարտադիր խնդիր համայնքի համար սահմանված է արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը, մյուս կողմից լիազորությունը վերապահված է, որպես արտադպրոցական կրթության կազմակերպում:

Բնականաբար, այս հակասությունը ևս տրամաբանական է, քանի որ 2016 թվականին, երբ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը շարադրվում էր նոր խմբագրությամբ, այդ պահին գործող «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվում էր արտադպրոցական դաստիարակություն եզրույթները, և միայն վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում է, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում տեղ են գտել արտադպրոցական կրթությանը վերաբերելի կարգավորումները:

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանեցնել նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությանը, դիտարկելով նաև «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան կարգավորումները և եզրութաբանությունը:

Միաժամանակ, առաջարկվում է լրացումներ կատարել «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, մասնավորապես՝ 39-րդ հոդվածում, փոփոխել հոդվածի վերնագիրը լրացնելով նաև արտադպրոցական կրթության բառերը, հոդվածի բովանդակության մեջ շարադրել համայնքի ղեկավարի լիազորությունները արտադպրոցական կրթության բնագավառում:

Այս առաջարկությունը առավել ամրապնդվում է, հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներով, կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության և կրթության բնագավառի պետական լիազոր մարմնի մասով սահմանված լիազորությունները, առավելապես՝ արտադպրոցական կրթության բնագավառին վերաբերող:

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, փաստորեն հստակ սահմանել է կառավարության մասով՝ պետական արտադպրոցական կազմակերպությունների, կենտրոնների օրինակելի կանոնադրությունները հաստատելու, արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագրերը սահմանելու և պետական և համայնքային արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների՝ պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու լիազորությունները, իսկ կրթության բնագավառի նախարարության մասով՝ արտադպրոցական ծրագրի ձևաչափը և վերջնարդյունքները՝ ըստ սահմանված ուղղությունները մշակելու և հաստատելու, արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ներկայացրած արտադպրոցական ծրագրերի երաշխավորման կարգը հաստատելու լիազորությունները:

Մինչդեռ, արտադպրոցական, մասնավորապես՝ համայնքային արտադպրոցական հաստատությունների կառավարման մասով որևէ լիազորություն այդ օրենքով սահմանված չէ: Արժանահավատ է դիտարկել, որ հանրապետության արտադպրոցական կրթության հաստատությունների գերակշիռ մասը համարվում է համայնքային ենթակայության, հետևաբար, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը առնվազն պետք է սահմաներ այդ մասով համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

6. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌԿԱ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2145-Ն որոշմամբ ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պետական արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը: Արտադպրոցական ոլորտը ֆինանսավորելու նպատակով, որպես հաշվարկային միավոր ընդունվեց տարեկան լրակազմի միջին չափանիշը՝ մեկ երեխա, հնարավորություն ընձեռվեց ունենալ արտաբյուջետային հաշիվներ:

Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային (ըստ ենթակայության) բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ լրացուցիչ աղբյուրներից: Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման համար անհրաժեշտ է կիրառել միասնական մոտեցում՝ հնարավորինս ստույգ հաշվարկել ֆինանսավորումը յուրաքանչյուր անհատական դեպքի համար:

Համաձայն Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2145-Ն որոշման 42-րդ կետի, արտադպրոցական կրթական հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

Հարկ է նկատել, որ արտադպրոցական կրթական հաստատությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը, ըստ էության տարբերակվում է համայնքային ենթակայության և պետական ենթակայության հաստատությունների մասով: Այսպես՝ համայնքային ենթակայության արտադպրոցական կրթական հաստատությունների գործունեության ֆինանսավորումը իրականացվում է այդ ծառայությունների դիմաց գանձվող տեղական վճարների և համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Գրեթե նույն

գործիքակազմը առկա է պետական ենթակայության արտադպրոցական կրթական հաստատությունների մասով, որի պարագայում, ֆինանսավորումը սակայն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Պետական ենթակայության արտադպրոցական կրթական հաստատությունների ֆինանսավորման մասով, հատկանշական է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 12.03.2021թ. N360 հրամանը, որով հաստատվել է ՀՀ պետական բյուջեի ընդունվեց «1148. Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրի «11001. Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառման շրջանակներում նախարարության համակարգում գործող կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների ֆինանսավորման կարգը: Հարկ է արձանագրել, որ այս հրամանը վերաբերելի է բացառապես ԿԳՄՍ նախարարության համակարգում գործող արտադպրոցական կրթական հաստատություններին:

Ֆինանսավորումը տրվում է ըստ իրականացվող միջոցառումների՝ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Սահմանվել է, որ Հայաստանում և Արցախում անցկացվելիք միջոցառումների ժամանակ յուրաքանչյուր մասնակցի համար գիշերակաց հաշվարկվում է առավելագույնը մինչև 5000 դրամ (ծախսերը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում) կամ մինչև 3000 դրամ (առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթերի):

Օրապահիկ սահմանվել է մինչև 2500 դրամ, իսկ ուսումնամարզական հավաքների օրական կեցության ծախսը՝ մինչև 9800 դրամ: Տրանսպորտային ծախսերը 1 ուղղությամբ Երևան քաղաքում հաշվարկվում է 100 դրամ, իսկ Հայաստանի և Արցախի տարածքում՝ միջքաղաքային երթուղիների համար սահմանված սակագների չափերով:

ՀՀ և Արցախի Հանրապետության տարածքից դուրս անցկացվելիք մարզական միջոցառումների համար կիրառվում են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 390-Ն որոշման դրույթները: Հրամանի համաձայն, արտադպրոցական դաստիարակություն իրականացնող կազմակերպությունները կարող են ֆինանսական միջոցներ ստանալ պատվոգրեր, հավաստագրեր, դիպլոմներ, մեդալներ և գավաթներ ձեռք բերելու համար: Նախատեսված են նաև ծառայությունների գրասենյակային և տնտեսական նյութերի, հագուստի ձեռքբերման և այլ ծախսեր:

Ֆինանսավորման հայտերն արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունները նախարարություն պետք է ներկայացնեն՝ համաձայն հաստատված ձևաչափի:

Այդ միջոցառումների իրականացման նպատակով, ԿԳՄՍ նախարարության և համապատասխան պետական ենթակայության արտադպրոցական կրթական հաստատության միջև կնքվում է պայմանագիր, միջոցառումների անցկացման և պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվելիք ֆիանսավորման վերաբերյալ:

Հարկ է արձանագրել, որ այս կարևոր գործիքակազմը, չի տարածվում համայնքային ենթակայության արտադպրոցական կրթության հաստատությունների վրա, ինչը հակասում է արտադպրոցական կրթության բնագավառում միասնական քաղաքականություն ունենալու սկզբունքներին, որոնք ըստ էության, որդեգրել է ՀՀ կառավարությունը, արտադպրոցական կրթության հարաբերությունների բարելավման նպատակով, կրթության բնագավառի օրենսդրության մեջ վերջերս կատարված փոփոխություններով պայմանավորված:

Վերոգրյալը հաշվի առնելով, առաջարկվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը և ՀՀ ֆինանսների նախարարությանը, քննարկել ՀՀ պետական բյուջեի շրջանակում՝ «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրի «Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառումներում նկատի ունենալ նաև համայնքային ենթակայության արտադպրոցական կրթական հաստատությունները:

Նշվածի համատեքստում, առաջարկվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, նախաձեռնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 12.03.2021թ.-ի հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով, արտադպրոցական դաստիարակության միջոցառման մասով կատարվել է 6 032 594,5 ՀՀ դրամի չափով հատկացում[17]:

Պետական ծրագրի շրջանակում, արտադպրոցական դաստիարակության հաստատություններին տրամադրվում են սուբսիդիաներ, որոնց տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 24.12.2003 թվականի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգին համապատասխան:

Ինչ վերաբերում է համայնքային ենթակայության արտադպրոցական կրթության հաստատություններին, ապա դրանց ֆինանսավորման գործիքակազմը հետևյալն է.

[17] Տե՛ս «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի Հավելված N1:

1) ծառայություններից օգտվողների համար՝ տեղական վճարի գանձում.

2) համայնքի բյուջեի միջոցներից՝ մնացած մասով համաֆինանսավորում:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝ համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական, սպորտի և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար նախատեսված է տեղական վճար, այսինքն, այս ծառայության դիմաց գանձվող գումարը համարվում է տեղական վճարի տեսակ:

Միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, սահմանվում է այդ ծառայության գծով՝ տեղական վճարի հետևյալ դրույքաչափը. համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով:

Սույն գնահատման շրջանակում կատարված իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր համայնքներում, ավագանիների կողմից սահմանվել են համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի տարբեր դրույքաչափեր:

Ստորև բերված աղյուսակում՝ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի[18] համայնքների ավագանիների կողմից հաստատված և այդ համայնքների արտադպրոցական կրթության հաստատություններում կիրառվող տեղական վճարների դրույքաչափերը.

N	**Համայնքի և արտադպրոցական կրթության հաստատության անվանումը**	**Ծառայության վճարի չափը**
1.	Մեղրի համայնքի «Արևիք» արվեստի դպրոց ՀՈԱԿ	Պար - 4000 դրամ Մյուս բաժիններ - 3000 դրամ

[18] Ուսումնասիրության համար վերցվել է ՀՀ Սյունիքի մարզը:

2.	«Գորիսի Շ. Ազնավուրի անվ. արվեստի դպրոց» ՀՈԱԿ	Արվեստի բաժին-1100 դրամ Երաժշտական բաժին-2000 դրամ
3.	«Գորիսի Ա. Սաթյանի անվ. երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2000 դրամ
4.	« Քաջարանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	Վոկալ – 1100 դրամ Մյուս բաժիններ-2200 դրամ
5.	«Սիսիանի Է. Ասյանի անվ. մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	Ժող. գործիքներ-3000 դրամ Փողային-3500 դրամ Դաշնամուր, ջութակ-4000 դրամ
6.	«Կապանի Ա. Խաչատրյանի անվ. թիվ 1 երաժշտական դպրոց » ՀՈԱԿ	Դաշնամուր – 2500 դրամ Ջութակ- 2000 դրամ Մյուս բաժինները -1600 դրամ
7.	«Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց » ՀՈԱԿ	Դաշնամուր- 2500 դրամ Ջութակ-2000 դրամ Մյուս բաժինները -1600 դրամ
8.	«Կապանի թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	Դաշնամուր – 2500 դրամ Ջութակ-2000 դրամ Մյուս բաժինները – 1600 դրամ
9.	«Կապանի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ	Դաշնամուր- 2500 դրամ Ջութակ-2000 դրամ Մյուս բաժինները – 1600 դրամ

10.	«Խնձորեսկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2000 դրամ
11.	«Շինուհայրի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2000 դրամ
12.	«Կապանի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ	1600 դրամ
13,	«Սիսիանի Զ. Խաչատրյանի անվ. գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ	4000 դրամ
14.	Սիսիան քաղաքի «Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ	2000-ից 6000 դրամ

Ընդհանուր առմամբ, Սյունիքի մարզի համայնքներում, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափը տատանվում է 1100 ՀՀ դրամից մինչև 6000 ՀՀ դրամի շրջանակներում:

Միաժամանակ, ուսումնասիրվել են նաև Երևան, Գյումրի և Հրազդան համայնքներում համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից գանձվող գումարների չափերը:

Այսպես, Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեով՝ այս ծառայության մասով եկամուտների հավաքագրման ընդհանուր ցուցանիշը կազմում է 90,177.5 ՀՀ դրամ: Ուսումնասիրելով Գյումրի համայնքի «Գյումրի համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» ավագանու 09.12.2022թ. N256-Ն որոշումը, կարելի է եզրահանգել, որ Գյումրի համայնքում, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայությունների մասով տեղական վճարի միջին չափը կազմում է 4.000 ՀՀ դրամ:

Երևան համայնքի պարագայում, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանվել են Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 687-Ն որոշմամբ: Այդ որոշմամբ հաստատված արտադպրոցական դաստիարակության ծառայության գծով սահմանված տեղական վճարների դրույքաչափերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում ամենաբարձր դրույքաչափը սահմանված է Երևանում:

Երևան քաղաքում համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափերը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում.

NN	**Արտադպրոցական կրթական ծառայության անվանումը**	**Ծառայության դիմաց գանձվող տեղական վճարի դրույքաչափը**
1.	խորացված մասնագիտական երգեցողության ուսուցում	ամսական 24500 /քսանչորս հազար հինգ հարյուր/ դրամ
2.	գործիքային (դաշնամուր, լարային նվագարաններ, փողային և ազգային նվագարաններ, հարվածային գործիքներ, ակորդեոն, տավիղ, կիթառ) բաժիններում ուսուցում	ամսական 20300 /քսան հազար երեք հարյուր/ դրամ
3.	երգեցողության ուսուցում	19300 /տասնինը հազար երեք հարյուր/ դրամ
4.	պարարվեստի ուսուցում	15000 /տասնհինգ հազար/ դրամ
5.	կերպարվեստի ուսուցում	9300 /ինը հազար երեք հարյուր/ դրամ
6.	թատերարվեստի ուսուցում	8700 /ութ հազար յոթ հարյուր/ դրամ

Ստացվում է այնպես, որ Երևան համայնքում, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի միջին չափը մոտարկված կազմում է 16.000 ՀՀ դրամ, ինչը, ըստ էության, բավականին բարձր է հանրապետական միջին ցուցանիշից (մյուս համայնքներում սահմանված դրույքաչափերի միջին ցուցանիշից):

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափերը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում[19].

NN	Արտադպրոցական կրթական ծառայության անվանումը	Ծառայության դիմաց գանձվող տեղական վճարի դրույքաչափը
1.	նկարչական բաժնի համար	2000 ՀՀ դրամ
2.	թատերական բաժնի համար	1000 ՀՀ դրամ
3.	մյուս բաժինների համար	3000 ՀՀ դրամ
4.	սպորտային մարզաձևեր	3000 ՀՀ դրամ
5.	նկարչական	3000 ՀՀ դրամ
6.	կար ու ձև	3000 ՀՀ դրամ
7.	խոհարարություն	3000 ՀՀ դրամ
8.	վարսահարդարում	3000 ՀՀ դրամ

Ըստ էության, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում սահմանված տեղական վճարի դրույքաչափերը ուղիղ համեմատական են հանրապետական միջին ցուցանիշին և բավականին ցածր են: Հրազդան համայնքի օրինակով, սույն գնահատման շրջանակում, վերլուծվել է այդ ծառայության ամբողջական իրականացման մասով ֆինանսական բեռը և դրա տարբերությունը մատուցվող ծառայության դիմաց համայնքի կողմից գանձվող տեղական վճարի ընդհանուր չափից:

Այսպես, Հրազդան համայնքում, բյուջետային տարվա նախաշեմին, համայնքի տարեկան բյուջեն ընդունելիս, արտադպրոցական դաստիարակության հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 211 որոշումը, որի համաձայն տարեկան աշխատավարձը կազմում է ՀՈԱԿ-ների համար՝ 144.598.600 դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 69.355.800 դրամ:

Էլեկտրաէներգիայի և ջեռուցման տարեկան ծախսը կազմել է ՀՈԱԿ-ների համար 9.280.000 դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 6.300.000 դրամ, ջրամատակարարման տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 469.900 դրամ, իսկ բյուջետային հիմնարկների համար՝ 595.000 դրամ:

[19] Աղյուսակի կազմման համար հիմք է հանդիսացել Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N 209-Ն որոշումը:

Կապի ծառայության տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 322.000 դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 216.000 դրամ: Ներքին գործուղումները բյուջետային հիմնարկների համար կազմում է 450.000 հազար դրամ: Տեղեկատվական ծառայություններ գծով տարեկան ծախսը ՀՈԱԿ-ներում կազմում է 500.000 դրամ:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար տարեկան նախատեսվել է ՝ՀՈԱԿ-ների համար 15.680.000 դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 400.000 հազար դրամ: Մասնագիտական ծառայությունների գծով ՀՈԱԿ-ների համար նախատեսվել է տարեկան 400.000 դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 56.000 դրամ:

Գրասենյակային նյութերի ձեռք բերման համար ՀՈԱԿ-ներում նախատեսվել է 520.000 դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 230.000 դրամ: Կենցաղային նյութեր ձեռք բերելու համար նախատեսվել է՝ ՀՈԱԿ-ների համար 580.000 դրամ, բյուջետային հիմնարկների համար 230.000 դրամ: Հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման համար ՀՈԱԿ-ներում նախատեսվել է 3.050.000 դրամ, բյուջետային հիմնարկներում՝ 1.700.000 դրամ: Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման համար նախատեսվել է ՀՈԱԿ-ներում 6.000.000 դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 1.600.000 դրամ: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման համար ՀՈԱԿ-ներում նախատեսվել է 30.000 դրամ: Կապիտալ դրամաշնորհներ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսվել է 1.000.000 դրամ, այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածով նախատեսվել է 500.000 դրամ:

Բյուջետային հիմնարկների համար առողջապահական և լաբորատոր նյութերի ձեռք բերման համար նախատեսվել է 115.000 դրամ: Պարտադիր վճարների համար նախատեսվել է ՀՈԱԿ-ներում 66.000 դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 22.000 դրամ: Վարչական սարքավորումներ ձեռք բերման համար բյուջետային հիմնարկներում նախատեսվել է 300.000 դրամի ծախս:

Ստացվում է այնպես, որ արտադպրոցական դաստիարակության կազմակերպման գծով Հրազդան համայնքի բյուջետային ծախսը կազմում է 241.592.3 ՀՀ դրամ, մինչդեռ՝ այս ծառայությունների մասով Հրազդան համայնքի սեփական եկամուտները, այսինքն՝ տեղական վճարների ընդհանուր չափը կազմում է ընդամենը՝ 25 միլիոն ՀՀ դրամ: Ստացվում է այնպես, որ Հրազդան համայնքը, իր սեփական բյուջետային միջոցներից շուրջ 215 միլիոն դրամ է հատկացնում տարեկան բյուջեով, որպեսզի կարողանա ապահովել արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը համայնքի վարչական տարածքում:

Այն համայնքներում, որոնցում, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափը ավելի քիչ է սահմանված, ինչպիսին է օրինակ Հրազդանը, կամ Սյունիքի մարզի բոլոր համայնքները, Գյումրի համայնքը և այլն, այդ ծառայությունների ամբողջական կազմակերպման և իրականացման մասով ավելի մեծ է համայնքի ներդրումը, մասնավորապես՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին տարեկան համաֆինանսավորման չափը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ
(01/01/2022-01/01/2023 թ. ժամանակահատվածի համար)[20]

Տարեկան հաստատված պլան		**Տարեկան ճշտված պլան**		**Փաստացի**	
Ընդամենը	Վարչական մաս	Ընդամենը	Վարչական մաս	Ընդամենը	Վարչական մաս
1 163 124,0	1 163 124,0	1 025 211,7	1 025 211,7	824 483,9	824 483,9

Վերը մեջբերված աղյուսակում ներկայացված է բոլոր համայնքներում նախատեսված եկամուտների չափը՝ տեղական վճարների հավաքագրման իմաստով: Որից պարզ է դառնում, որ պլանավորվող ցուցանիշները չեն համապատասխանում փաստացի հավաքարված եկամուտների ցուցանիշների հետ: Այս իմաստով, առկա է պատշաճ վարչարարության իրականացման խնդիր, որի համատեքստում, համայնքները, ի դեմս տեղական ինքնակառավարման մարմինների, աշխատակազմերի և համայնային ոչ առևտրային կազմակերպությունների, բավականին մեծ անելիքներ ունեն:

Ելնելով սույն գնահատման շրջանակում արված եզրահանգումներից, ստորև ներկայացվում են հետյալ առաջարկությունները.

1. Համայնքների բյուջետային միջոցները առավել արդյունավետ կառավարելու, օրենքով սահմանված համայնքի պարտադիր խնդիրների

[20] Տե՛ս ՀՀ Ֆինանսների նախարարության եկամուտների տեղեկագիր «Համայնքային եկամուտներ» բաժին:

լուծման համար հավելյալ ֆինանսական ռեսուրսներ գոյացնելու նպատակներից ելնելով, առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ քննարկել արտադպրոցական կրթական հաստատությունների ծառայություններից օգտվելու տեղական վճարի հաշվարկման և գանձման մեթոդաբանության (մեթոդական ցուցումներ, ուղեցույց) մշակելու հարցը:

2. ՀՀ համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, վերանայել համայնքի ավագանու որոշմամբ սահմանված, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափերը (դրույքաչափերը):
3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ քննարկել արտադպրոցական կրթական հաստատությունների ծառայություններից օգտվողների մասով, մասնավորապես՝ վճարների գանձման անհնարինությամբ պայմանավորված, հաստատության և ծնողի միջև պայմանագրերը լուծելու, համապատասխան վարչարարություն կիրառելու հետ կապված մեթոդական ցուցումներ մշակելու հարցը:
4. Օրենքով կամ ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևի միջոցով (մեթոդական ցուցում), հստակեցնել, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի մասով արտոնություն կիրառելու հետ կապված դեպքերը, կարգը ու դրանցով պայմանավորված իրավահարաբերությունները:

7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Կրթության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից, կարծես թե, ստեղծվում է տպավորություն, որ առհասարակ, հանրապետությունում արտադպրոցական կազմակերպությունները կամ ամբողջությամբ մասնավոր տիրույթում են գործում, կամ ամբողջությամբ պետական ենթակայության են:

Սակայն, իրավակիրառական պրակտիկայից ելնելով, պետք է արձանագրել, որ այդ կազմակերպությունների մեծ մասը համարվում է համայնքային: Ինչը իրավացիորեն հանգեցնում է այն եզրահանգմանը, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքը առնվազն արտադպրոցական կրթության կազմակերպման իմաստով, պետք է սահմաներ համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ, որով պարզ կդառնար, արտադպրոցական կրթության կազմակերպման և իրականացման իրական դերակատարի ինչպես կարգավիճակը, այնպես էլ լիազորությունների շրջանակը:

Վերը մեջբերվածի համատեքստում, առավել քան նպատակահարմար է անդրադառնալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումներին: Առաջին հերթին, անհրաժեշտ է արձանագրել, որ արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը, համարվում է համայնքի պարտադիր խնդիր[21]: Նշված պարտադիր խնդրի լուծմանն հասնելու նպատակով, օրենսդիրը, համայնքի ղեկավարին վերապահել է սեփական լիազորություն, որով համայնքի ղեկավարը կազմակերպում է արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում[22]:

Մի կողմից, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ արտադպրոցական կրթության իրականացումը, դիտարկում է որպես համայնքի ղեկավարի սեփական լիազորություն, ինչն ենթադրում է, որ այդ կրթության իրականացման հետ կապված ծախսերը իրականացվում են համայնքի բյուջեի սեփական միջոցների հաշվին, մյուս կողմից՝ իրավակիրառական պրակտիկան «գալիս է» փաստելու, որ արտադպրոցական հաստատությունների զգալի մասը համարվում է համայնքային ենթակայության:

Բացի այդ, ուշադրության է արժանի «Կրթության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ կրթության բնագավառում օրենսդրության խնդիրները,

---

[21] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:

[22] Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:

մասնավորապես հետևյալը. իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև: Սակայն, այս խնդրի լուծմանը հասնելու իմաստով, նույն օրենքը օրենսդրական նախադրյալներ չի ստեղծել, առավելապես, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կամ որ նույնն է, իրավասությունների սահմանման բացակայությամբ պայմանավորված:

Վերը նկարագրվածի համատեքստում, անհասկանալի է դառնում «Կրթության մասին» ՀՀ օրենքով, համայնքային ենթակայության արտադպրոցական կազմակերպությունների մասով, ինչպես նաև արտադպրոցական կրթության բնագավառում համայնքի ղեկավարին վերապահվելիք լիազորությունների բացակայությունը:

Նշվածը հաշվի առնելով, ***առաջարկվում է*** «Կրթության մասին» ՀՀ օրենքում սահմանել կարգավորումներ համայնքային ենթակայության արտադպրոցական կազմակերպությունների առանձնահատկությունների վերաբերյալ, մասնավորապես՝ դրանց կառավարման և գործունեության ֆինանսավորման սկզբունքների մասով:

Միաժամանակ, **առաջարկվում է** նույն օրենքով, սահմանել արտադպրոցական կրթության բնագավառում համայնքի ղեկավարի համար լիազորություններ, որոնք համահունչ կլինեն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգավորումների հետ, միաժամանակ, կստեղծեն բավարար պայմաններ՝ օրենսդրական գործիքակազմեր, այդ լիազորությունը պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

2. Հարկ է նկատել, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում՝ 10.02.2023թ. ընդունված ՀՕ-26-Ն օրենքով կատարված փոփոխություններն ու լրացումները չեն ուղեկցվել ամբողջական հարակից օրենքներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու հաշվի առնմամբ, ինչի մասին է վկայում այն փաստը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում դեռևս կիրառվում է «արտադպրոցական դաստիարակություն» եզրույթները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում 10.02.2023թ. ընդունված ՀՕ-26-Ն օրենքով «արտադպրոցական դաստիարակությունը» վերաձևակերպվել է որպես «արտադպրոցական կրթություն», **առաջարկվում է** «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանեցնել «Կրթության մասին» ՀՀ օրենքում կիրառվող եզրույթների և հասկացությունների հետ:

3. Ըստ էության, արտադպրոցական կրթական ծառայությունները կարելի է որակել որպես համայնքային ծառայություն, քանի որ, ինչպես արտադպրոցական կրթական հաստատություններն են գրեթե ամբողջությամբ համարվում համայնքային ենթակայության, այնպես էլ այդ ծառայությունները մատուցվում են համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Արժանահավատ է դիտարկել նաև այն հանգամանքը, որ պետությունը, բացի արտադպրոցական կրթության բնագավառի քաղաքականության մշակումից, իրավակիրառական պրակտիկայում մասնակցում կամ աջակցում է այդ ծառայությունների բարելավվմանը, օրինակ՝ արտադպրոցական հաստատությունների շենքային պայմանների կամ տեխնիկական հագեցվածության ապահովման մասով պետության որոշակի աջակցությունը: Այս իմաստով, հատկանշական կլիներ, եթե նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակով, ՀՀ կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգում ավելացներ նաև արտադպրոցական կրթության հաստատությունների կառուցումը, վերակառուցումը և նորոգումը, որպես ծրագրային ոլորտ:

Վերոգրյալը հաշվի առնելով, **առաջարկվում է** ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, նախաձեռնել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն (սուբվենցիայի տրամադրման կարգը սահմանող) որոշման մեջ լրացումներ կատարելու գործընթաց, որով արտադպրոցական կրթության հաստատությունների կառուցումը, վերակառուցումը և նորոգումը կհամարվի որպես ծրագրային ոլորտ, ինչի համատեքստում, կձևավորվի համայնք-պետություն համագործակցություն ի շահ արտադպրոցական կրթության և դրանից բխող ծառայությունների բարելավմանը:

4. Եթե չլիներ գործող «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա համապատասխան կարգավորումները, առնվազն տպավորություն կձևավորվեր, որ արտադպրոցական կրթության կազմակերպման լիազորությունը՝ իրականացնողի տեսանկյունից չունի «հասցեատեր»: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը և իրականացումը համայնքի տարածքում համարվում է համայնքի պարտադիր խնդիր:

Վերը մեջբերված համայնքի պարտադիր խնդրի լուծման նպատակով, օրենսդիրը, նույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն, համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական

կրթության իրականացումը համայնքի տարածքում: Այս օրենսդրական կարգավորումից հետևում է, որ արտադպրոցական կրթության կազմակերպումը համայնքի տարածքում համայնքի ղեկավարին վերապահված լիազորություն է, ինչից ենթադրվում է, որ ամբողջ հանրապետությունում այդ լիազորությունը իրականացվում է համայնքների ղեկավարների կողմից:

Հարկ է նկատել, որ առկա են օրենսդրական հակասություններ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի երկու իրավանորմերի, ինչպես նաև «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորումների միջև: Մի դեպքում, որպես պարտադիր խնդիր համայնքի համար սահմանված է արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը, մյուս կողմից լիազորությունը վերապահված է, որպես արտադպրոցական կրթության կազմակերպում:

Բնականաբար, այս հակասությունը ևս տրամաբանական է, քանի որ 2016 թվականին, երբ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը շարադրվում էր նոր խմբագրությամբ, այդ պահին գործող «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվում էր արտադպրոցական դաստիարակություն եզրույթները, և միայն վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում է, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքում տեղ են գտել արտադպրոցական կրթությանը վերաբերելի կարգավորումները:

Ելնելով վերոգրյալից **առաջարկվում է** «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանեցնել նույն օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությանը, դիտարկելով նաև «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան կարգավորումները և եզրութաբանությունը:

Միաժամանակ, **առաջարկվում է** լրացումներ կատարել «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, մասնավորապես՝ 39-րդ հոդվածում, փոփոխել հոդվածի վերնագիրը լրացնելով նաև «արտադպրոցական կրթության» բառերը, հոդվածի բովանդակության մեջ շարադրել համայնքի ղեկավարի լիազորությունները արտադպրոցական կրթության բնագավառում:

5. Պետական ենթակայության արտադպրոցական կրթական հաստատությունների ֆինանսավորման մասով, հատկանշական է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 12.03.2021թ. N360 հրամանը, որով հաստատվել է ՀՀ պետական բյուջեի ընդունվեց «1148. Արտադպրոցական

դաստիարակության ծրագիր» ծրագրի «11001. Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառման շրջանակներում նախարարության համակարգում գործող կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների ֆինանսավորման կարգը: Հարկ է արձանագրել, որ այս հրամանը վերաբերելի է բացառապես ԿԳՄՍ նախարարության համակարգում գործող արտադպրոցական կրթական հաստատություններին:

Ֆինանսավորումը տրվում է ըստ իրականացվող միջոցառումների՝ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Սահմանվել է, որ Հայաստանում և Արցախում անցկացվելիք միջոցառումների ժամանակ յուրաքանչյուր մասնակցի համար գիշերակաց հաշվարկվում է առավելագույնը մինչև 5000 դրամ (ծախսերը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում) կամ մինչև 3000 դրամ (առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթերի):

Օրապահիկ սահմանվել է մինչև 2500 դրամ, իսկ ուսումնամարզական հավաքների օրական կեցության ծախսը՝ մինչև 9800 դրամ: Տրանսպորտային ծախսերը 1 ուղղությամբ Երևան քաղաքում հաշվարկվում է 100 դրամ, իսկ Հայաստանի և Արցախի տարածքում՝ միջքաղաքային երթուղիների համար սահմանված սակագների չափերով:

ՀՀ և Արցախի Հանրապետության տարածքից դուրս անցկացվելիք մարզական միջոցառումների համար կիրառվում են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 390-Ն որոշման դրույթները: Հրամանի համաձայն, արտադպրոցական դաստիարակություն իրականացնող կազմակերպությունները կարող են ֆինանսական միջոցներ ստանալ պատվոգրեր, հավաստագրեր, դիպլոմներ, մեդալներ և գավաթներ ձեռք բերելու համար: Նախատեսված են նաև ծառայությունների գրասենյակային և տնտեսական նյութերի, հագուստի ձեռքբերման և այլ ծախսեր:

Ֆինանսավորման հայտերն արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունները նախարարություն պետք է ներկայացնեն՝ համաձայն հաստատված ձևաչափի: Այդ միջոցառումների իրականացման նպատակով, ԿԳՄՍ նախարարության և համապատասխան պետական ենթակայության արտադպրոցական կրթական հաստատության միջև կնքվում է պայմանագիր, միջոցառումների անցկացման և պետական բյուջեից այդ նպատակով տրամադրվելիք ֆիանսավորման վերաբերյալ:

Հարկ է արձանագրել, որ այս կարևոր գործիքակազմը, չի տարածվում համայնքային ենթակայության արտադպրոցական կրթության հաստատությունների վրա, ինչը հակասում է արտադպրոցական կրթության բնագավառում միասնական

քաղաքականություն ունենալու սկզբունքներին, որոնք ըստ էության, որդեգրել է ՀՀ կառավարությունը, արտադպրոցական կրթության հարաբերությունների բարելավման նպատակով, կրթության բնագավառի օրենսդրության մեջ վերջերս կատարված փոփոխություններով պայմանավորված:

Վերոգրյալը հաշվի առնելով, **առաջարկվում է** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը և ՀՀ ֆինանսների նախարարությանը, քննարկել ՀՀ պետական բյուջեի շրջանակում՝ «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրի «Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառումներում նկատի ունենալ նաև համայնքային ենթակայության արտադպրոցական կրթական հաստատությունները:

Նշվածի համատեքստում, **առաջարկվում է** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, նախաձեռնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 12.03.2021թ.-ի հրամանի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց:

6. Համայնքների բյուջետային միջոցները առավել արդյունավետ կառավարելու, օրենքով սահմանված համայնքի պարտադիր խնդիրների լուծման համար հավելյալ ֆինանսական ռեսուրսներ գոյացնելու նպատակներից ելնելով, առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ քննարկել արտադպրոցական կրթական հաստատությունների ծառայություններից օգտվելու տեղական վճարի հաշվարկման և գանձման մեթոդաբանության (մեթոդական ցուցումներ, ուղեցույց) մշակելու հարցը:

7. ՀՀ համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, վերանայել համայնքի ավագանու որոշմամբ սահմանված, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափերը (դրույքաչափերը):

8. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ քննարկել արտադպրոցական կրթական հաստատությունների ծառայություններից օգտվողների մասով, մասնավորապես՝ վճարների գանձման անհնարինությամբ պայմանավորված, հաստատության և ծնողի միջև պայմանագրերը լուծելու,

համապատասխան վարչարարություն կիրառելու հետ կապված մեթոդական ցուցումներ մշակելու հարցը:

9. Օրենքով կամ ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևի միջոցով (մեթոդական ցուցում), հստակեցնել, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի մասով արտոնություն կիրառելու հետ կապված դեպքերը, կարգը ու դրանցով պայմանավորված իրավահարաբերությունները: